

Միխայիլ Ա.Կոկժան
Կոմսյոզիտոր, արվեստագիտության թեկնածու

ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԹՈՒՆ ՊԱՀԱՊԱՆԸ

Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակի առթիվ*

**Ամեն մարդ չի կանա խըմի՝ իմ ջուրըն՝ ո՛ւրիշ ջրերն է,
Ամեն մարդ չի՛ կանա կարդա՛ իմ գիրըն՝ ուրիշ գրերն է.
Բունիաթս ավա՛զ չիմանաս, քա՛րափ է, քար ու կրերն է...¹**

Գրիգոր Նարեկացուց հետո, որն այդքան վեր բարձրացրեց հայ պոեզիայի նշաձողը, հաջորդ վեց դարերի ընթացքում, որոնք ամենևին էլ զուրկ չէին գրական բարձր ձեռքբերումներից, հնարավոր չէ գտնել «Մատեան ողբերգութեան» բանաստեղծական խոսքից ավելի խոր և առինքնող օրինակներ:

Եվ միայն 18-րդ դարում հայ պոեզիայի աշխարհի մտավ Սայաթ-Նովա բանաստեղծը, երգիչն ու անհատականությունը, որի ստեղծագործության մեջ նրբագույն քնարականության կողքին հնչում է անհատի և ժողովրդի ոգու բռնադատման, իշխողների անարդարության, հասարակ մարդկանց սոցիալական ստորացման դեմ ուղղված բողոքը: Եթե փորձենք ժողովրդական մեծ երգչի ճակատագիրը քննել հայ ժողովրդի պատմության դիտանկյունից, ապա Սայաթ-Նովայի բանաստեղծական խոսքի հայտնությունը կարելի է համարել մարդկային ծովում կուտակված բողոքի և ընդվզման բարձրակետը: **Սայաթ-Նովայի ստեղծագործությունների, կերպարների և նրանց փոխաբերությունների միջոցով աշխարհի հետ խոսում է ինքը՝ մեր մեծ, տաղանդավոր ու թախծոտ ժողովուրդը:**

Ինչպիսի՞ն էր տեսնում աշխարհը Սայաթ-Նովան: Ո՞րն էր նրա բանաստեղծություններում առկա այս կամ այն կերպարի ծննդյան շարժառիթը: Ինչպե՞ս է բանաստեղծն արտահայտել իր զգացմունքների պոռթկումը:

Այս հարցերի պատասխանները նրա բանաստեղծություններում են՝ աշխարհի և նրանում բնակվող մարդկանց մասին փիլիսոփայական դատողություններում.

*Յոդվածն ընդունվել է տպագրության 7.09.2012:

¹ Սայաթ-Նովա, կազմեցին և խմբագրեցին Մ. Աղայան և Շ. Տալյան, Եր., «Հայպետհրատ», 1946, էջ 19:

Աշխարհը մե փանջարա է, թաղերումեն բեզարիլ իմ,
Մըտիկ արվողըն կու խուցվի, դաղերումեն բեզարիլ իմ.
Էրեզ լավ էր կանց վուր էսօր, վաղերումեն բեզարիլ իմ.
Մարթ համաշա մեկ չի ըլի, խաղերումեն բեզարիլ իմ:

Դովլաթըն էյթիբար չունե, եփոր կերթա իր շըբարով,
Լավ մարթըն էն է, գլուխըն պահե աշխարհումըս էյթիբարով.
Աշխարհըս միզ մընալու չէ իմաստնասիրաց խաբարով.
Գուզիմ թըռչի բըլբուլի պես, բաղերումեն բեզարիլ իմ:

Ով կոսե թե յիս կու ապրիմ առուտեմեն ինչրու մութըն.
Աստուծու ձեռումըն. հեշտ է մարթու աշխարք ելումուտըն,
Դուրթս էնդուր ճանփա չէ գընում՝ շատացիլ է խալխի սուտըն,
Քըսանըն մե դուլ չին պահում, աղերումեն բեզարիլ իմ:

Աշխարհըս միզ մընալու չէ, քանի նըստինք գող ու սափին,
Հում կաթնակիր Աթամի գաթ, նալաթ ըլի էտ քու ըսփին
Համփիրութիներս հատիլ է, չիմ դիմանում խալխի գափին,
Դոստիրըս դուշման ին դարի, յաղերումեն բեզարիլ իմ:

Սայաթ-Նովեն ասաց՝ դարդըս կանց մե ճարըն շատացիլ է,
Չունիմ վաղվան քաղցըր փառքըս, հիմի դառըն շատացիլ է,
Բըլբուլի պես էնդուր կուլամ՝ վարթիս խարըն շատացիլ է,
Չին թողնում վախտին բացվիլու, բաղերումեն բեզարիլ իմ²:

Այս բանաստեղծական-փիլիսոփայական էսսեում առկա է աշխարհաստեղծման վեհության և նրանում մտածող մարդու դերակատարության խորագույն ընկալումը: Ըստ էության՝ սա բարոյական առաքելության համառոտ շարադրանք է՝ բոլորին և յուրաքանչյուրին ուղղված բարձր խրատաբանություն: Աշխարհն անկատար է, բայց անկատար է մեր՝ հաճախ մեղքերի թողության մասին մոռացող Աստծո մեղապարտ ծառաների պատճառով:


Մյուս կողմից՝ սա ամենքին ներկայացված գոջում է, խոստովանություն՝ բարձր պոեզիայի տեսքով, ուստիև չափազանց ազդու է և չափանիշային՝ պոետի հոգուն խորամուխ եղող յուրաքանչյուրի համար:

Համամարդկային այս հատկանիշների հետ միասին՝ Սայաթ-Նովայի արվեստը խորապես հայկական է, որի ակունքները բխում են գուսանական երգերի հայկական ավանդույթից, ինչը մասամբ էր միայն հիշեցնում ավելի ուշ շրջանի աշուղական արվեստը: Անշուշտ, գուսանների ու վարձակների արվեստի երաժշտական օրինակները չեն հասել մինչև մեր օրերը, սակայն պահպանվել են մեծ քանակությամբ բանաստեղծական տեքստեր, որոնք իրենց ձևով, բովանդակությամբ և կերպարային արտահայտչականությամբ նման են Սայաթ-Նովայի երգերին: 5-րդ դարի հայ մեծագույն մտածողներից մեկը՝ Մովսես Խորենացին, վկայում է գուսանների արվեստի մեծ ժողովրդականության մասին: Ավելին՝ եթե

2 Սայաթ-Նովա, նույն տեղում, էջ 45:

հետագա դարերի արևելյան հասարակություններում աշուղներ կարող էին լինել միայն տղամարդիկ, ապա չպետք է մոռանալ, որ հայերի մոտ գուսան-տղամարդկանցից գատ գոյություն են ունեցել նաև վարձակ-կանայք, որոնք աչքի են ընկել բարձր կրթական մակարդակով, որովհետև ինչպես բանաստեղծական, այնպես էլ երաժշտական արվեստը լուրջ ու խոր գիտելիքներ էր պահանջում:

Միջնադարի հայ հոգևոր և ժողովրդական երաժշտական մշակույթի ինքնատիպության մասին վկայող համոզիչ երևույթներից մեկը նրա ներդաշնակ կառուցվածքն է. մեղեդին, սկսվելով իր վերին ձայնասահմանում, կամ՝ յուրաքանչյուր բաժնում կամ էլ իր ամբողջության մեջ հետևողական երաժշտաարտահայտչական անկման միտում ունի: Դա հստակորեն երևում է մեր կողմից բերված Մայաթ-Նովայի երգում.



Այս երևույթն էականորեն տարբերում է հայկական մեղեդին արևելյան աշուղական երգից, որում մեղեդին, աստիճանաբար նվաճելով ձայնակարգի առանձին տոները, բարձրանում է դեպի գագաթնակետը, որից հետո է միայն իջնում հիմնական ձայնակարգային տոնիկային:

Սակայն գոյություն ունի Մայաթ-Նովայի այս երգի մեղեդու բուն հայկական արմատների առավել կարևոր վկայություն. դա լադային հնչյունաշարի հինգերորդ աստիճանի երկակի ձգողականությունն է, երբ երաժշտական առաջին ֆրազի սկզբում նրա ճեղքումն ուղղված է վեր՝ դեպի վեցերորդ աստիճանը, իսկ հաջորդում ավտերացիոն շտկումը ձգտողականությունը վերաուղորդում է վար՝ դեպի չորրորդ աստիճանը: Բայց գլխավորն այն է, որ հենց լադային շտկման հետ կապված ձգտողականության այդ իջեցումը երաժշտությանը հաղորդում է բուն հայկական ինտոնացիոնության հատկանիշ. հինգերորդ աստիճանի իջեցումը փոխակերպում է նախնական պենտախորդը՝ այն վերածելով լոկրիականի, տվյալ դեպքում՝ տիպիկ հայկականի: Դրա հետ մեկտեղ այս երգում լադային կառուցվածքներն ունեն հայ երաժշտական մշակույթին բնորոշ առանձնահատկություն՝ տետրախորդների շրջայումն իրականացվում է հետևյալ սկզբունքով՝ առաջին տետրախորդի վերջին տոնը երկրորդի համար դառնում է ելակետային.



Սայաթ-Նովայի խոհերի շարունակությունն է «Դուն էն գրլխեն իմաստուն իս» տողով սկսվող բանաստեղծության և համապատասխանաբար՝ երգի մեջ հորդացող բողոքը, ինչը կրքոտ ու հրաշունչ ճառ է, անգամ՝ դիմադրության կոչ:

Դուն էն գրլխեն իմաստուն իս, խիլքդ հիմարին բա՛ք մի անի՛,
Էրագումըն տեսածի հի՛դ միզի մե հեսա՛ք մի անի,
Յիս խոմ էն գրլխե՛ն էրած ի՛ն, նուրմեկանց քաբա՛ք մի անի,
Թե վուր գիդի՛մ բեզարիլ ի՛ս, ուրիշին սաբա՛ք մի անի:

Չըկա քիզ պես հո՛ւքմի հեքիմ, դուն Բոստոմի Չա՛լ թաքավուր.
Ասկըդ ասկերումըն գովա՛ծ, համդ ունիս գո՛գա՛լ, թաքավուր,
Թե էսանց էլ սու՛չ ունենամ, գըլուխս արա տա՛լ, թաքավուր,
Մըտիկ արա՛ քո Ստիդժողի՛ն, նահախ տիղ դագա՛ք մի անի:

Յարալուն հեքիմն էնդուր գուզե՛ դիղ տալու է՛, ցա՛վ տալու չէ.
Քանի գուզե՛ արբաբ ըլի՛, դուլըն աղին դա՛վ տալու չէ.
Դու քու սիրտըն ի՛ստակ պահե, յաղի խոսկըն ավտալու չէ.
Աստծու սերըն կանչողի պես դըռնենետ ջուղա՛ք մի՛ անի:

Ամեն մարթ չի կա՛նա խըմի՛ իմ ջուրըն՝ ուրիշ ջըրեն է,
Ամեն մարթ չի՛ կանա կարդա՛ իմ գիրըն՝ ուրիշ գըրեն է՛.
Բունիաթըս ավա՛զ չիմանաս, քա՛րափ է, քա՛ր ու կըրեն է՛,
Սելավի պե՛ս, առանց ցամքի՛լ, դուն շուտով խաբա՛ք մի անի:

Քանի գուզե քա՛մին տանե, ծովեմեն ավա՛զ չի պակսի,
Թեգուզ ըլիմ, թեգուզ չըլիմ՝ մեջլիսներուն սա՛զ չի պակսի.
Թե կու պակսի՛մ, քի՛զ կու պակսի՛մ, աշխարհիս մե՛ մա՛զ չի պակսի,
Սայաթ-Նովու՛ գերեզմանըն Հինդ, Հաբաշ, Արա՛ք մի անի³:

Ուշադրություն է գրավում այն փաստը, որ բանաստեղծության չորրորդ տան մեջ Սայաթ-Նովան ուղիղ կերպով իրեն ներկայացնում է որպես մի առաջնորդի, որը կարող է իր հետևից տանել ճնշված ժողովրդին, եթե դրա կարիքը զգացվի: Կասկած չկա, որ բանաստեղծն այնքան ուժեղ էր ու համարձակ, որ ծնունդով լի-նելով ճորտ՝ իրեն թույլ է տվել նման բողոքի արտահայտություն: Եվ ոչ միայն դա, քանզի միևնույն ժամանակ պոետը իշխողների ու հասարակ մարդկանց միջև խաղաղության և համաձայնության կոչ է անում: Անշուշտ, 18-րդ դարում Թիֆլիսում դժվար էր պատկերացնել մեկ այլ կենսաձև. միապետությունը շարունակում էր մնալ կառավարման միակ մատչելի ձևն անգամ Սայաթ-Նովայի նման լուսավոր միտք ունեցող անձի համար:

Այս փիլիսոփայական երգում Սայաթ-Նովան կիրառել է ազգային բանահյուսության մեջ հաճախ հանդիպող ռիթմական անհամաչափության սկզբունքը: Այսինքն՝ ողջ երգը ծավալվում է շատ ինքնատիպ 5/4 չափում, վերջին հինգերորդ քառորդը ձգվում է ավելի երկար, քան մնացած բոլորը: Այս կամ այն ձևով այդ ռիթմական էֆեկտը տարածվում է երգի ողջ մեղեդու վրա: Դա մեղեդուն հաղոր-

3 Սայաթ-Նովա, նույն տեղում, էջ 19:

դում է օրհներգային սկզբի որոշ նշույլ, ինչը նրա բանաստեղծական բովանդակության պայմաններում կերպարային ցայտունության ուժեղացման միջոց է,

Moderato

Մեղ

Դու՛ն չե՛ս գրի - ինձ ի - մաս - տուն իս ինչե՛ր հի - մա - թից

բար մի ա - նի, է - բա - գա - մբո՛ւ, տե - սա - թի հիդ -

Սակայն զարմանալիորեն մեզ է հասել նաև երգի մեկ այլ, մտախոհ քնարական տարբերակը՝ երաժշտական գեղագեղանքների հարստությամբ և մեղեդիական առավել նրբին գծով.

Andante sostenuto

Մեղ

Դու՛ն չե՛ս գրի - ինձ ի - մաս - տուն իս ինչե՛ր հի - մա - թից

բար մի ա - նի, է - բա - գա - մբո՛ւ, տե - սա - թի հիդ -

Եվ արդյոք սրանում չէ՞ Սայաթ-Նովայի ստեղծագործական երկվությունը, որում փիլիսոփայական բարձր բանաստեղծականությունը զուգակցվում է քնարական թախծի ռոմանտիզմին:

Սայաթ-Նովայի անկրկնելի քնարերգությունը նրա արվեստի ամենախոշոր շերտն է, որի միջոցով բանաստեղծը կարողացել է աստվածացնել իր սիրած էսկին.

Յիս մե դարիբ բուլբուլի՛ պես, դուն օսկե դափազի նըման.
 Էրեսըս դի վուտիդ տակին, անց կա՛ց՝ փիանդազի նըման.
 Յա՛ր, քիզի՛դ խոսիլ իմ ուզու՛մ Շահի իլթիմազի նըման,
 Աջայի՛բ սու՛րաթի տեր իս, ռանգըդ է գուլզազի նըման:

Յա՛ր, մըտիլ իս բաղչի մե՛ջըն, աջա՛յիբ սեյրա՛ն իս անում.
 Շուկդ արեգա՛զի նըման է՝ տեսնո՛ղին հեյրա՛ն իս անում.
 Ջիզարիս կըրակ իս տըվի, էրվում իմ՝ քիդյան իս անու՛մ.
 Վու՛նց մե գո՛գալ չէ ունեցի էտ քու՛ արած նազի նըման:

Հենց իմացի, յա՛ր, քու դու՛լ իմ, քանզ հախո՞վ գընա՛ծ չըրաղ իմ.
Քու դըրանըղ նընզած ըլիմ, ով տեսնե, ասե՛ տուսաղ իմ.
Էշխեմեղ հիվանդացիլ ի՛մ, վունց միռնում ի՛մ, վունց քե սաղ ի՛մ.
Ծովի պես ու՛րդա՛ն իմ տալիս, գըժվի՛լ իմ Արագի նըման:

Ով կու տեսնե՛, ջունուն կու՛լի՛, բարկ է՛րեսիդ խա՛լ իս անում.
Էդ ջուքամըն դուն կու քաշիս, չուն մահիս՝ խիալ իս անում.
Յար, յիս քիզ բարո՛վ իմ տալի՛ս, շուռ իս գալի՛ դալ իս անու՛մ,
Չունքի խոսկըղ ա՛նց է կենում բելլու՛ շահանդագի նըման:

Սայաթ-Նովեն ասաց՝ կու՛ լամ. չիմ լա՛ց լի քե ճար ունենամ.
Էլ յիս կու քաշիմ էս դու՛սեն, թուղ լի ահուգար ունենամ.
Յար, քիզ վըրեն ա՛րք ունենամ, մե լավ իխտիար ունենա՛մ,
Առնում, տանի՛մ մեջլիսնիրըն օսկե՛ջըրած սագի նըման⁴:

Կարելի է միայն գուշակել (քանզի անվիճելի ապացույցներ չկան), որ այս երգը հասցեագրված է վրաց իշխանուհի Աննային, որի հետ փոխադարձ սերն այդպես էլ անհասանելի մնաց Սայաթ-Նովայի ծագման պատճառով: Այս արտակարգ բանաստեղծական երգը քնարերգության գագաթներից մեկն է՝ ոչ միայն Սայաթ-Նովայի ժառանգության մեջ: Այն համամարդկային գլուխգործոցի արժեք ու նշանակություն ունի:

Իր գրաֆիկական առանձնահատկություններով սա շատ հարագատ է հայկական սաղմոսերգությանը: Հայ հոգևոր երաժշտությունն իր ուղին սկսելով քրիստոնեության ընդունման հետ միասին, հարյուրամյակների ընթացքում կատարելագործվել է, ձեռք բերել լեզվի խոսքային ինքնատիպությունից և նրա արտահայտչականության ներուժից բխող իր ուրույնությունը:

Երգն առատ է երգեցողության յուրիյացիոն⁵ սկզբունքներով, որոնց բնույթը նույնն է թե՛ հայկական մոնոդիայում և թե՛ հռոմեական գրիգորյան խորալում՝ քրիստոնեական հավատը: Հենց քրիստոնեական տաճարներում է ծնվել հանգուցային բառերի, ավելի ստույգ՝ դրանց ձայնավորների երաժշտական զարդարման պրակտիկան, ինչն ուժեղացնում է բառային հասկացության մեջ ամփոփված էական նշանակությունը:

Երգում կարևոր բառերի մեղեդիական «դրվագազարդումներից» բացի և ի հավելումն դրանց, Սայաթ-Նովան կիրառում է տիպիկ հայկական մելիզմատիկա, ընդհուպ մախշազներ, որոնց հետ զուգորդմամբ մեղեդիական ողջ գիծը ներկայանում է անհավանականորեն նրբին, թափանցիկ և իմպրովիզացիայի միջոցով: Դրա հետ մեկտեղ, ռիթմական որոշակիության և իմպրովիզացիոնության միջև «հավասարակշռության» պահպանումը վոկալ մելոդիկայի առանձին ձայնավոր հնչյունների ռիթմամեղեդիական մանրացման արդյունք է, հայկական երաժշտական մտածողության վառ օրինակ:

Արևելքի ու Արևմուտքի սահմանագլխին գտնվող հայ երաժշտության մեջ

4 Սայաթ-Նովա, նույն տեղում, էջ 21:

5 Յուրիյացիա (լատ. Jubilatio - ցնծություն) - վոկալիզ ալելուիայի վերջում, որտեղ մելիզմատիկորեն երգվում է այդ բառի վերջին վանկը (allelu-ja): Սովորական մելիզմներից տարբերվում է տևողությամբ և մեղեդիական զարգացածությամբ: Տես Музыкальный энциклопедический словарь, Москва, 1990, с. 660: Մոնոդիայի հայկական երաժշտական մշակույթի առնչությամբ մենք այս եզրույթն օգտագործել ենք, որովհետև դրանում շատ են ձայնավոր հնչույթներով բառերի երգանման արտասանությունները:

Եվրոպական երաժշտական մտածողության հատկանիշները բնականորեն միախառնվել են Արևելքի երաժշտության մեղիտատիվության հետ: Եվ այդ խառնուրդն այդքան բնական և անբակտելի ձևով հանդիպում է միայն Հայաստանի երաժշտական արվեստում, այդ թվում՝ հայ մեծ երգիչ ու բանաստեղծ Սայաթ-Նուվայի ստեղծագործության մեջ:

Լրացնենք մեր դատողությունները քիչ առաջ մեր կողմից նկարագրված ոճական խառնուրդի ևս մեկ վկայությամբ. մեծացրած սեկունդայի ինտոնացիան՝ երգում արևելյան երաժշտական մշակույթի հայտանիշի առկայությունը, օրգանապես զուգակցվում է յուրիլյացիոն երգեցողության սկզբունքների հետ, որի ներկայությունն իր արմատներով գնում է դեպի եվրոպական քրիստոնեական հոգևոր պրակտիկա.

Յիս մե դարիբ բլբուլի պես

Moderato

Նվագ

Երգ

Յիս մե դարիբ բլբուլի պես. զան օսկե զա - վա - զի եր - ման է - թե - օրս դի - չու - տիչ տա -

Միավասիկ այս երգում ևս առկա է լադային աստիճանի ճեղքման ֆենոմենը: Այս անգամ մեղեդիական արտահայտչությունն, ասես, «վերացնում» է արևելյան սեկունդան՝ մեղեդիական զարգացումը մերձեցնելով եկեղեցական մոնոդիայի գեղագիտությանը.

կրն, ոճց կոց փի - ան դա - զի եր - ման Յար փչե կիչ խո - սիլ իմ ու - զում նու - կի ի - թե - մա - զի եր - ման Ա - թա - յիբ սու - թա - թի տիբ իս, ոսն - զզգ է զու - զա - զի եր - ման.

sempre

f

ten.

a tempo

rit.

Fine

6 Մեծացրած սեկունդայի վերին տոնի տարածության ալտերիացիոն «հեռացումը»:

Ընդհանրապես Սայաթ-Նովան համամարդկային է ոչ միայն իր մտքի ու ոճի անկրկնելիության, այլև ստեղծագործության բազմալեզվայնության պատճառով: Սայաթ-Նովան տիրապետում էր նվազագույնը հինգ լեզուների, իսկ երեքով՝ հայերենով, վրացերենով և խոսակցական թուրքերենով նա ստեղծել է իր բանաստեղծական գլուխգործոցները, որոնք դուրս են գալիս հայկական ազգային մշակույթի շրջանակներից ոչ միայն լեզվական առումով, այլև բանաստեղծությունների ու երգերի բովանդակային էությանը:

Հայտնի է հայոց լեզվի բարբառների խորագետ և Սայաթ-Նովայի ստեղծագործությունների թարգմանությունների հեղինակ, ռուս բանաստեղծ Վալերի Բրյուսովի արտահայտությունը. «Սայաթ-Նովան այն առաջնակարգ բանաստեղծներից մեկն է, որոնք իրենց հանճարի ուժով արդեն դադարում են լինել առանձին ժողովրդի սեփականությունը, այլ դառնում են ողջ մարդկության սիրելիները»⁷:

Երբեմն վեճերի առարկա է դառնում այն փաստը, որ Սայաթ-Նովայի՝ հայոց լեզվով ստեղծված բանաստեղծությունների թիվն ավելի փոքր է, քան վրացերենն ու խոսակցական թուրքերենը: Սակայն Սայաթ-Նովայի պատկանելությունը հայ ժողովրդին որևէ կասկած չի հարուցում, իսկ մինչև մեր օրերը հասած բանաստեղծությունների նման թվաքանակը դեռևս չի վկայում այն մասին, որ պատմական արհավիրքների՝ բարբարոսների բազմաթիվ արշավանքների ժամանակ չեն եղել դրանց զգալի կորուստներ:

Բայց եթե հարցին նայենք մեկ այլ կողմից, ապա տարբեր լեզուներով Սայաթ-Նովայի ստեղծած բանաստեղծությունների թվից անկախ՝ դրանցում կարելի է տեսնել նրա մեծ իմաստությունն ու քրիստոնեական սերը մերձավորի հանդեպ: Սայաթ-Նովայի հանճարեղ միտքն ու հոգին համամարդկային է և ուղղված է մուլտրակի բոլոր մարդկանց, առավել ևս՝ հարևան ժողովուրդներին, որոնք միմյանց հետ փոխանակում էին իրենց հոգևոր-մշակութային ավանդույթները: Կասկած չկա, որ Սայաթ-Նովան ոչ միայն տիրապետում էր հարևան ժողովուրդների լեզուներին, այլև հասկանում նրանց ձգտումները, աշխարհընկալման յուրահատկությունները, հարգանք էր տածում վերջիններիս հավատի և էթնիկ ավանդույթների հանդեպ: Այստեղից էլ՝ նրանց լեզուներով ստեղծագործելու ցանկությունը, ինչը մարդկային ոգեղինության, հիացմունքի և բարեկամական ձգտումների արտահայտություն է: Հենց դա է ստեղծագործական ոգևորության բարձրագույն շրջափուլը՝ մարդկանց, աշխարհը ճանաչելու և այն բանաստեղծության երաժշտականությամբ ներկայացնելու ձգտումը: Ցավոք, բանաստեղծական նման ժեստը՝ պատվի ու բարեկամական զգացմունքների արտահայտությունը, հաճախ է մերժվում...

Չի կարելի նաև չհիշել այն մասին, թե ինչպիսի հրաշալի երաժիշտ է եղել Սայաթ-Նովան, քանզի նա իր բանաստեղծությունները միաժամանակ երգել է՝ նվագակցելով որևէ երաժշտական գործիքի միջոցով: Մեր օրերը հասած՝ քյամանչայի վրա Սայաթ-Նովայի իմպրովիզացիաների ու խաղերի արտակարգ տպավորիչ և մեղեդային օրինակները այդ ժողովրդական գործիքի հայկական լինելու փաստի ամենահավաստի վկայությունն են, չնայած նրանով նվագում են կովկասյան ու արևելյան բազում երկրներում:

Իսկ թե ինչպիսին էր Սայաթ-Նովա երաժիշտը, հենց ինքն էլ պատասխանել է իր բանաստեղծական երգերից մեկում.

7 Саят-Нова в переводах В. Брюсова, Ереван, изд. АН Армянской ССР, 1963, с. 7.

Ամեն սագի մեշըն գոված դուն թամամ տա՛սն իս, քամանչա.
 Նաբազ մարթ քիզ չի կանա տեսնի, դուն նըրա պա՛սն իս, քամանչա.
 Ղա՛ստ արա՛ էլ լավ օրերուն էդիվըն հասնի՛ս, քամանչա.
 Քիզ ինձնից ո՞վ կա՛նա խըլի՛ աշուղի բասն ի՛ս, քամանչա:

Անգաճըդ էրծաթեն պիտի, գըլուխըտ ջավահիր քարած,
 Կուրըտ շիրմայեմեն պիտի, փուրըտ սաղափով նաղշ արած,
 Միմըդ օսկեն քաշած պիտի, էրկաթըդ փանջարա արած,
 Օշով դիմեթըդ չի գիդի՛ լավ ու արմասն իս, քամանչա:

Ճիպուտըդ վարադնած պիտի, թահր ունենա հագար ռանգով,
 Չարըտ ռաշի կուդեն պիտի, փուր դուն խոսիս քաղցըր հանգով.
 Շատին գարթուն կու լուսացցնիս, շատին կու քընեցնիս բանգով,
 Անուշահամ գինով լիքըն դուն օսկե թասն իս, քամանչա:

Ածողիդ էրկու կու շինիս. առաչ չայի, դափա գուգիս,
 Կու մեճըրվիս այիվնումըն, պարապ վախտի ռափա գուգիս,
 Յիփ վեր գուքաս մեջլիսումըն, քաղցըր գող ու սափա գուգիս,
 Բողորքըդ գոգալնիր շարած՝ մեջլիսի կեսն իս, քամանչա:

Շատ տըխտուր սիրտ կու խնդացնիս, կու կըտրիս հիվընդի դողըն,
 Յիփ քաղցըր ձայնըդ վիր կոնիս, բաց կուլի հիղըդ խաղողըն.
 Խալխին էս իլթիմազն արա, ասին՝ Ասրի քու ածողըն.
 Քանի սաղ է Սայաթ-Նովեն, շատ բան կու տեսնիս, քամանչա:

Միայն մեծ բանաստեղծը կարող էր այսպես դասավորել իր տողերը, որպեսզի նրանցում լավի լարերի ձայնը, բանաստեղծական տողերի արանքում հնչի քյամանչայի մեղեդին և դրա միջոցով, այդ թվում՝ հենց իր բանաստեղծական խոսքի երաժշտայնությամբ, ծնունդ առնեն կերպարները, իսկ երաժշտության գիտակները վայելեն փայլուն նվազը:

Բայց այս երգում էլ, վոկալ-գործիքային գեղեցկություններից բացի, առկա է հոգևոր մոնոդիային՝ Գ ձայնին, հայկական հոգևոր երգասացության կանոնին բնորոշ հատկանիշը, իսկ ձայնավորների երգելու ձևերը նույնպես փոխառված են հայկական եկեղեցական մոնոդիայից: Հենց Գ ձայնին են բնորոշ մեծացրած սեկունդայով ելևէջները, որոնք տվյալ մեղեդիում առանցքային են.



Երգ



Հիրավի, հնարավոր չէ ընդգրկել անհունը, քանի որ Սայաթ-Նովայի մեզ հասած 115 երգ-բանաստեղծությունների երաժշտության և պոեզիայի աշխարհն իր բազմազանությամբ ու հագեցածությամբ համեմատելի է տիեզերքի հետ: Կերպարների, մտքերի բազմազանությունն ու հոգեկան խռովքն այստեղ զուգակցվում են հոգու խրախճանքի հետ: Եվ բանաստեղծական հորինվածքների ու իմաստուն եզրահանգումների այս խաղում ամեն անգամ երևում է հայացքն աշխարհաստեղծմանն ուղղած մարդը, ով փորձում է իմաստավորել ու բացատրել իր կողմից հասկացվածը՝ բոլոր նրանց, ովքեր պատրաստ են ունկնդրել պոետի խոսքի միջոցով մատուցվող ճշմարտությունը:

Ու թեև բանաստեղծ ու երգիչ Սայաթ-Նովայի կերպարների աշխարհը չափազանց լայն է և խիստ պատկերավոր, այնուամենայնիվ, նրա երգերի պոետիկայի մեջ կարևորագույն տեղը զբաղեցնում է քնարերգությունը՝ այն, ինչի համար պոետի դերը նախախնամությամբ էր կանխորոշված: Եվ եթե ճիշտ է Ֆ. Դոստոևսկու «գեղեցկությունը կփրկի աշխարհը» արտահայտությունը, ապա կարելի է եզրակացնել, որ երեք հարյուրամյակ առաջ Սայաթ-Նովայի ձեռքով ստեղծված քնարական բանաստեղծությունների անկրկնելի գեղեցկությունը, մեր ներկա՝ ցավոք ոչ պոետիկ ժամանակներում աշխարհը բզկտող հակասությունների մեջ տառապող մարդկային հոգիները փրկելու ոչ մեծաթիվ միջոցներից մեկն է:

THE UNWINKING GUARD OF SPIRITUAL ARMENIA
 Dedicated to the 300th anniversary of Sayat-Nova

Mikhail A. Kokzhayev